

ապագայ զինակցութեան ու աջակցութեանը պէտք պիտի ունենանք և որոց պակասը լեցնելու ոչ մի միջոց ունինք. թողէ՛ք որ ապրին և զարգանալու առիթ ունենան որ յետոյ կարողանան զարգացնել ու փրկել և Հայաստանի փրկութիւնը Հայերով պիտի ըլլայ և Հայերու համար մի՛, մի՛ սպառնէք Հայերը:

Օրինոյ ՆՍՁԱՌ

Նիւ Եօրք, 26 յուլիս 07
ՅԱՐԳԱՆԻ ԶՈՂԻՆ ԹԱՂԱՌՄԸ

Որդոցեան Յովհաննէս Ս. Թաւ. շանճեանի թաղումը կատարուեցաւ հինգշաբթի, յուլիս 25ին, կէս օրէն վերջ ժամը 2ին, իւր բնակավայրէն տարուելով դէպի գերեզմանատուն, իր ծանօթներէ և բարեկամներէ սա. կաւաթիւ անձերու ուղեկցութեամբ: 3 կառքեր բեռնաւորուած էին ծագ. կեպակներով: Արարողութիւնը կատարեց Գեր. Սարաճեան, իրեն հետ ունենալով Հայր Գաթիթանեան վարդապետը և թաշնեան քահանայն: Տունը, դագաղին վրայ՝ դամբանական մը խօսեցաւ Սրբազանը տըխ. րադէմ հանդիսականներուն և անմը. խիթար այրիին ներկայութեանը. արցունքներ կայլականման կը հոսէին սիրեցեալ թաղանճեանի ծանօթներուն աչքերն ի վար. ծանօթներուն կըսենք, որովհետեւ բացի Տիկնօյմէն և երկու հրեշտակադէմ դատրիկներէն — մեծը 5 տարեկան, փոքրիկը 3 —, արեւակից ազգականներ չկային. անոնք կը մնան վերջին տեսութենէ մ'ալ զուրկ, ովկիանի միւս ասիերուն վրայ...: Սրբազանը նորնպէս կու. լար: «Դուն, Յովհաննէս, դուն ըսիր ինձ անգամ մը» ըսաւ Սարաճեան Արք. կերկրուն ձայնով և արտաս. ւախառն շնորհով «որ աւելի լաւ է սպաննուիմ քան թէ տամ դրամս շուտութեան գործածուելու և շատ. ցունելու համար Հայաստանի որբու. այրիներու և որբուկներու թիւը: Աննկուն կամքի և հաստատ համոզ. ման տէր, ապրեցար ինչպէս զին. տըր մը կաւելով թշնամիներուդ դէմ քու գաղափարիդ համար, և մինչեւ վերջին շունչդ չդադրեցար այդ կըռ. ւէդ: Կը սիրէիր հայրենիքդ, կը ի. ըէիր ազգդ. ու իբրեւ կամաւոր զոհ մը զոհարեցիր ինքզինքդ Հայաս. տանի սիրոյն: Քու որոշ գաղափարդ և անբասիր գործունէութիւնդ չկըր. ցաւ տեսնել վարադ կըքով կուրցած ներքին թշնամին. ու դաւաճանօրէն երկու գնդակ միտց սիրագործով սըր. տիդ մէջ որ պատրաստ էր օգնու. թեան ձեռք կարկառելու գպրոցնե. րու, արկածեալներու, եկեղեցւոյ և բոլոր բարեկատակ ձեռնարկու. թիւներու...»:

Թաղանճեանի մարմինը ամփոփ. ւեցաւ Kensico գերեզմանատան մէջ. իրեն հետ թաղուեցան և իր երկու տղաքներն որոնք 5 տարի առաջ մե. ուած՝ մարմիննին Պօլէն հոս բերուե. լով կը պահուէին: Նոյնպէս թաղուե. ցան իրեն հետ և շատ մը արգասա. քեր ձեռնարկներ...:

Վաղորօք աչալըութեամբ մը թաղումը կատարուեցաւ շաբթու մէջ. բազմաթիւ ուստիկաններու և գաղտնի ուստիկաններու հսկողութեամբ՝ ժող. վրդական ամեն կարգ ու սարք մեր. ժուեցաւ. շատեր չընդունուեցան նոյն իսկ վերջին տեսութիւն մ'ընելու համար:

Այս պիտի ըլլար Ամերիկահայե. րուս պարծանք եղող անձի մը վախ. ճանը...:

ՏԵՂԱՆ ՄԿՈՒՆԴ

Նիւ Եօրք, 26 յուլիս

Թաղանճեանի սպանուելու շուրջ

Եթէ հնար լինէր մեզ նոյնու. թեամբ ներկայացնել ինչ որ գրեցին և հրատարակեցին այս ցաւառիթ ոճ. րագործութեան մասին ամերիկեան օրաթերթերը, մեծկակ հատոր մը պիտի կազմէր այդ և բոլոր Հայու. թիւնը տեսակ մ'անձկութեամբ պի. տի պատէր անհամբեր կերպով ըս. պատելով ելքին: Որ վերակազմեալ Հնչակեաններու գարնանգործու. թեան և անխիղճ շահատակութիւն. ներուն զոհ եղաւ Յովհաննէս Թաղ. շանճեան, հայելի պէս որոշ կերեւի կարգացողաց երբ մանաւանդ ի նկա. տի առնենք որ սպանութենէն 1/2 ժամ վերջ, այն է ժամը 2ի թղթատա. րական կնիքով նամակներ, անգլիերէն զրուած և նոյնպէս անգլիերէն «մաս. նախուժը Յեղափոխութեան» ստու. րագրուած, զրկուեցան Նիւ Եօրքի հայ հարուստներուն սա պարունա. կութեամբ: «Սպաննեցինք թաղան. ճեանը որ չէր յօժարած վճարել մեր պահանջը և որ ձեզ ալ կը խրատէր չվճարել: Կը տեսնէք ինչ պատահե. ցաւ իրեն: Եթէ դուք եւս չվճարէք, երկու շաբաթ միայն պիտի ապրիք»:

Այս նամակներէն մին հասաւ նաեւ Պօսթոնի հայ հարուստներէ միոյն, Ս. Յ. կիւլեգեանի ձեռք: Ասոնց վը. րայ կայ խորհրդանշան մը տպագրու. ւած, կին մը կէս կանգնած, երկու ձեռքերն իրար միացած և դաստակ ներուն մէջ սրածայր դաշոյն մը մըլ. ւած է: Այն հարուստներ, որոց անունները հրատարակուեցան որպէս զոհեր յառաջիկայ շաբթուան, են

- Պետրոս Գազանճեան
- Կ. կիւլեգեան
- Ն. Գոստիկեան
- Տր. Տատրեան
- Ս. Մինասեան
- Կ. Գարակէօզեան:

Ի հարկէ անտարբեր չպիտի գըտ. նուէր տեղական կառավարութիւնը բոլոր այս գարձուածներուն. վերջ ի վերջոյ Մարդուկէսեան վարդապետն ալ պէտք էր հարցաքննութեան են. թարկուէր: Ամէն մարդ գիտէր ի սկզբան, ամէն ոք կը ճանչնար այս շարիքին հեղինակը, սակայն ոչ ոք կը համարձակէր անոր անունը տալ. ինչպէս Պր. Գամպըր, Թաղանճեանի զլխաւոր գործակատարը, համար. ձակ կերպով ըսաւ ուստիկանապետի երեսին. «Հոս կեանքը շատ ատան է. մարդը կըսպանուի, մանաւանդ այն. պիտի մարդ մը որ Հայութեան և Ա.

մերիկայի ամէն դասակարգէն կը սիր. ւէր ու կը յարգուէր, այսպիսի մարդ. մը չարաչար կերպով կըսպանուի, և ամէն մարդ գիտէ, կը ճանչնայ անոր հեղինակը և սակայն կը վախնան...: անոր անունը տալէ, թաղանճեան մինակ չէր վախար. ամենէն առաջ անիկայ յանձնեց անոր անունը. բայց կառավարութիւնը այնքան տկար գտնուեցաւ որ թաղանճեան կըս. պանուի վերջ ի վերջոյ. անշուշտ ու. րիչներ ալ իրենց քաջութիւնը կը կորսնցունեն: Եթէ ներկայ կառավա. րութիւնը վերջ ի վերջոյ չկարողանայ բուն հեղինակները գտնել, Հայերը պիտի կազմակերպուին և պիտի մա. քառին իրենց այս ներքին թշնամի. ներուն դէմ»:

Ու Հայերը անտարբեր չմնացին: Թաղանճեանի թաղման երեկոյն, զգայուն անհատներէ ժողով մը տեղի ունեցաւ այն շէնքին մէջ՝ որ 20-25 քայլ միայն հեռու էր թաղանճեանի գործատեղէն և միանգամայն ըս. պանուած տեղէն: Այդ ժողովի մէջ որոշուեցաւ ընդհանուր ժողովի մը կանչել Նիւ Եօրքի հայ գաղութը և հոն, մեր ցասունն ու զայրոյթը՝ ոճ. րի հեղինակներուն, և ցաւակցու. թիւնն ու համակրութիւնը՝ զժազդ զօհին յայտնող որոշում մը քուէար. կել և զրկել Նիւ Եօրքի մամուլին, ցոյց տալու համար թէ հայ ազգը համակիր չէ ոճրագործութեան և ա. ւազակութեան, այլ խումբ մը միայն է այն որ Հայութեան և Յեղափոխու. թեան զիմակին տակ՝ աւեր ու չարիք միայն կը գործէ: Որոշուեցաւ այդ ժողովը գումարել յուլիս 27ի շաբաթ երեկոյն:

ՏԵՂԱՆ ՄԿՈՒՆԴ

Նիւ Եօրք, 28 յուլիս

Յաւման ժողով

Թաղանճեանի սպանուելու համար

Մ'օտաւորապէս հազար զգայուն Հայեր Նիւ Եօրքէն և շրջակայքէն խոնուած էին Murray Hill Lyceumին մէջ յուլիս 27ի շաբաթ երեկոյ, ժամը 8ին. բազմաթիւ թղթակիցներ և տեղեկատուներ ալ եկած էին Նիւ Եօրքի մամուլի կողմէն: Լուսանկա. րիչ մը՝ ժողովականներուն և զձագ. րող մ'ալ բեմին վրայ եղողներուն պատկերն առին յատկապէս World օրաթերթին համար:

Բեմին վրայ կար ամերիկեան աստ. զազարդ դրոշակով ծածկուած սեղան մը, որու ետեւը նստած էին տիրա. դէմ և վշտահար Գեր. Սարաճեան Արք., Տր. Ա. Այվազեան, Պատ. Ճէ. նիչեան և մի քանի Ամերիկացիներ: Ատենապետը, Տգէր. Այվազեան, ժող. վը բացաւ, բացատրելով նպատակը. որմէ յետոյ ատենադպիրը Տիրա Լե. ւոն Մ'Եսրոպեան կարդաց որոշմա. զիրը հայերէն և անգլիերէն լեզու. ներով. կարդացուեցաւ նաեւ Պօսթո. նէ Հայ Հպարտապետական ակումբի կողմէն եկած ցաւակցական որոշմա. զիրը որոնք պիտի քուէարկէին զայն իրենց շրջանակին՝ Պօսթոնի մէջ՝ ժողով մը սարքելով յաջորդ երեկուն:

Ապա ոտքի կանգնեցաւ Սրբազ. նը և սկսաւ խօսիլ. խորազգած ցա. ւակցական շնորհով պատկերացուց ողբացեալ զոհին վեհ բնաւորութիւ. նը, աննկուն և հաստատակամ գոր. ծունէութիւնը, իւր ազգին ու հայ. րենիքին համար ունեցած սէրը, և ապա աւելցուց. «Թաղանճեանի զի. տէր որ պիտի սպաննուէր. իւր մահ. ւան կըսպասէր օրէ օր՝ մի կամաւոր զինուորի պէս. նա զիտէր որ Ողբ. մի համուտ պիտի ողբայ զինքը, իսկ չարերը և վատերը միայն պիտի հըրճ. ուին իւր մահով. աւելի նախապա. տիւ համարեց ազգին համար ինք սգ. րի առարկայ մը դառնալ քան թէ չարերուն զօրութիւնը աւելցունելով անուղղակի պատճառ դառնալ ազգի զլխուն չարիքներ և մեծամեծ աղէտ. ներ աւելնալուն: Ամերիկեան օրաթեր. թերէ ումաք իրենց ցղձէ յերկրեցին որպէս թէ մենք զենքին դէմ զենք բարձրացունելու զիտաւորութիւն. ունենանք. որպէս թէ չարը չարով պիտի դարձանենք. ատիկա գոյց մանաւոր նպատակներով գրուած է մենք, ինչպէս միշտ, այս անգամ՝ ալ այս անհոգի ոճրագործութեան դէմ եղբայրական սէր մը պիտի ունենանք: Եթէ ես ըլլայի կառավարութեան պետը, արդարութիւնը ի գործ դը նեւու համար ամէն միջոց գործած. ւու պիտի աշխատէի. որովհետեւ այդ տղան, որ զրկուեցաւ իր ձեռքով գործելու ոճիրը, անիկա արդէն խեղճ ու անմշակ տղայ մ'է. անոր տղե. զգացումները գրգռելով գրգռե. ն զինքը. իր պետերն են զլխաւոր պա. տասխանատուները, արդարութիւնը զանոնք պէտք է երեւան բերէ»:

«Իբրեւ Աւետարանի հաւատացող մը, կը հաւատամ որ մարդիկ ինչ ցաննեն՝ այն պիտի հնձեն. եթէ ատե. րութիւն՝ ատելութիւն, եթէ բարե սրտութիւն՝ բարեբերութիւն» լե. հայրական գործովայիր ոճով մը յիշե. ցուց ժողովուրդին անտարբերու. թիւնը որ մէկ կողմ քաշուած և թո. զած է հրապարակը կուսակցամոռնե. րուն. և աւելցուց՝ որ մասնաւոր հոգ պիտի տարուի ասկէ վերջ ժողով. զին յառաջիկութեան և զարգաց. ման նպատակու. լսարան, գպրոց պիտի հաստատուին, գործակատար պիտի նշանակուի գաղթականական գործին հսկելու ևայլն, և խնդրեց որ ժողովուրդն ալ իւր աջակցութիւնը չզլանայ:

Տր. Ա. Այվազեան յաջորդելով Սրբազանին՝ խօսեցաւ թաղանճեանի յատկութիւններու մասին. ինք որ մանկութենէն կը ճանչնար զայն, գի. տէր անոր ամէն մէկ գործերը, գի. տէր թէ ո՛րքան բարեկատակ գոր. ծերու համար խնայած չէր իւր դրո. մը. գիտէր թէ ինչպէս հեռատես էր նա թէ՛ ազգային և թէ՛ վաճառակա. նական գործերու մէջ. և թէ ինչպէս անոր սիրտը իր հայ ազգի սիրով կը բարախէր: Ապա խօսեցաւ Ամերիկա. ցի մը. կ'օրծեմ կընելու ըսել Ամե. րիկացի հայ մը. որովհետեւ ինչպէս ինք յայտարարեց՝ առ թէ, ըսաւ, հա. յասէր Ամերիկացի մը. (ատենա.

կէն սկսած մինչև այժմ մասնակցած էր Սասունի և Մուշի կողմեր թիւրք զորքերին հետ պատահած ընդհանուր հարձակումներին և չէր ուզած ցարդ հեռանալ հայրենի երկրէն : Մահ 28/10 յունիսին երբ Մուշի Սուլուի գիւղին մէջ իր գործակիցներին հետ խորհրդակցութեան մը մէջ կը գտնուէր, թիւրք ոստիկանութիւնն անոր հետադատած և ուր գտնուին իմացած լինելով, պաշարեր է հայ յեղափոխական խումբը, թակարդի մը մէջ բռնածի նման : Սաստիկ կուռէ մը յետոյ, որի մէջ սպանուեր են մի քանի թիւրք զորքեր և իրենց ըսպան, յաջողութեամբ յեղափոխականներէ մի քանին փախչիլ : Բայց իրենց խմբակցութեամբ Գեորգ Չաուու և իր մի քանի ընկերները գնտակահար մեռեր են : Այժմ կը ճշդուի որ Մուշի վերջին ընդհարումներին մէջ հայ խմբի հրամատարն է հղեր Գեորգ Չաուու և ոչ թէ Արզրանիկ ինչպէս հրատարակած էին եւրոպական մի քանի թերթեր :

Արտասահմանի, ինչպէս և Ռուսիան, մի քանի հայ եկեղեցիներին մէջ հողեհանգստի հանդէսներ կատարուեցան Գեորգ Չաուուին համար :

Յարգանք՝ իր ազգի շիրոյն համար անձնազոհութեան զգացմանը :

ՀԱՅ ԱՇԽԱԿՆԵՐՆԵՐԸ ՄԱՐՏԵՑԻ ՄԷՋ

Քաղաքիս իրաւարանական ֆազիլդէի Ա. դասարանի ուսանողներէն վահան Մ. փորթուզայեան յաջողութեամբ իր տարեկան քննութիւն անցուցած է Լքսի ֆազիլդէին առջեւ, Բ դասարանը մտնելու համար : Մասնակցելով նաեւ տարեկանի մրցումին, քաղաքային իրաւագիտութեան (droit civil) մէջ Ա. յիշելութեան (1re mention) մրցանակն ստացած է :

Նոյն ֆազիլդէի Բ դասարանի ուսանողներէն Տիար Տիրան Մ. Թէքէեան յաջողութեամբ անցուցած է իր տարեկան քննութեան Ա. մասը :

— Պուշտի Ռոնի նահանգին մէջ գտնուող վայապրի Հողագործական գործնական վարժարանի եռամսայ դասընթացքն աւարտելով յուլիս 20ին քննութիւն տուած և վկայականի արժանացած 13 աշակերտներին ցանկին մէջ կը տեսնենք նաեւ Ճար. ճիկեանի անունը :

— Մարտի վաճառականական բարձրագոյն վարժարանի աշակերտներէն հետեւեալներն արժանացած են բարձրագոյն վկայագիր (diplôme supérieur) ստանալու .

Կիւրեղեան Յովհաննէս, Միրզայեան Երուանդ և Գամպէրեան Օւրիկ (Շարունակելի)

ՀԱՅԵՐ ՇԻՏԱԼԻՍ

Վենետիկ Միտիթարեան Միաբանութեան Արքայապետ Նշանակուել է Հ. Յովհաննէս Վ. Թորոսեան որ կ'Պոլիս Գատրգիւղի Միտի-

թարեան վարժարանի տեսչութիւնը կը վարէր :

— Վիքտոր Էմմանուէլ Դ. Թագաւորի նախագահութեամբ Վենետիկ մէջ մայիս 9-12ին կատարուած է մարմնակրթանքի իտալական ընդհանուր մրցանք մը որին մասնակցած են Մուրատ-Ռափայելեան վարժարանի աշակերտները յարժարագոյններէն կազմուած 18 հոգիի խումբ մը, իրենց աշակերտակից Պոլսեցի Տիար Վահրամ փափազեանի խմբակցութեամբ . ատենք նաւաստիի համազգեստ հագած էին ճերմակ օկկալոյտ շերտերով խայտարղէտ կուրծքին մէջտեղ՝ կարմիր յատակի մը վրայ, ոսկեղէն տառերով կը կարդացուէր Արմէնի (Հայ) : 4500 մըրցողներին մէջէն՝ երկրորդ կարգի արժաթ պսակն ստանալու արժանացեր են Մուրատ-Ռափայելեանի հայ աշակերտները : Այդ 18 մրցանակաւոր աշակերտներին ցանկին մէջ կը տեսնենք նաեւ ծանօթ հրապարակագիր և այժմ առեւտրական գործով զբաղող Տիար Տիգրան Ճիւղեւորեանի որ գիրին՝ Լեւոնի անունը, որին ինչպէս մարմնակրթանքի նոյնպէս և այլ ուսումներին մասին նոյն վարժարանի մէջ ունեցած յառաջդիմութիւնը կը շնորհաւորենք սրտազին խնդակցութեամբ :

— Լիմանի միաբաններէն Տ. Կոմիտաս Վ. Սողոմոնեան որ Բարիզի և Փրնէզի մէջ տուած նուագահանդէսներովը փայլուն կերպով ապացուցած էր իր երաժշտագիտական տաղանդը, Վենետիկ Ս. Ղազար վանքին և Մուրատ-Ռափայելեան վարժարանին մէջ նուագահանդէսներ տուած և բնակխօսութիւններ ըրած է հայկական երաժշտութեան վրայ որոնք Հերմ հրացուով նկարագրած է երկարօրէն Վենետիկ «Բաղմավէպ»ը :

ՆԱՄԱԿ ՌՈՒՄԱՆԻԱԷՆ

Փօքչան, յունիս 29/12 յուլիս 1907
Հանդիս պարգեւաբաշխութեան
Հայոց Ազգային երկսեռ վարժարանաց
Այսօր կէս օրէն զինի տեղոյս Ս. Հրապարակական վարժարանին մէջ տեղի ունեցաւ երկսեռ ուսանողաց պարգեւաբաշխութեան հանդէսն, որ սովորականէն շատ աւելի շքեղութեամբ կատարուեալ : Վարժարանի ընդարձակ դահլիճն յատկապէս զարդարեալ էր դափնիներով՝ երկրիս ժողովրդասէր Վեհապետաց, Թագաւորին և Թագուհոյն, պատկերներով, ընդ որս կը փայլէին նաև մեր ազգի անցեալ փառաց և մեծութեան հիմնադիրներու դէպքերն, որք իրենց անշունչ ստուերաքմերովն, գիտես թէ, խնդութեան ոգի կը կրէին ի տես սոյն միտիթարական հանգիստի այս օտար երկրում :

Ուսանողք և ուսանողուհիք մի շարք առաջ արդէն իւրեանց պաշտօնական քննութիւնք տուած էին կառավարութեան նշանակեալ յատուկ յանձնաժողովոյ մ'առջեւ, որպէս և վարժարանի մէջ Պատ. Հոգաբարձութեան տալեւ, և ուրախ եմք ըսելու որ քննութիւնք անցան խիստ փայլուն եղանակաւ, յապացոյց մեր երկսեռ ուսանողաց ծրարանութեան :

Նի՞՛ք յիրաւի օգտակար աշխատութիւնք ամենուրեք վարժարանի են, ապա ուրեմն մեր դպրոցական մասնակներն ալ վարժարուելու իրաւունք ունէին ի պակասաւորումն իւրեանց տարեկան ճգանց :

Վսեմ. Տիար Ֆերհաթ Ս. Ֆերհաթեան, Պատ. Հոգաբարձութեան նախագահն և միանգամայն երկսեռ վարժարանաց վերատեսուչն, որ առաջ յատուկ հրաւիրագրեր գրած էր առ Փօքչանի հայ ժողովուրդն և առ ծնողս երկսեռ ուսանողաց, որոչեալ ժամուռն երկսեռ բազմութիւնն խոնուած էր ի վարժարան և անհամբեր կրտսակին հանգիստ բացման (ասոնցմէ ոմանք արդէն 3-4 օր առաջ այցելած էին վարժարանս ներկայ գտնուելու դաշնակի քննութեան և տեսնելու ուսանողուհեաց ձեռագործներն), որ սկսաւ ի ժամ 5, կէսօրէն ետքը, հայ և ուրմէն երգասացութեամբ հետզհետէ կարդացուեցան հայերէն և ուրմաներէն ճառեր, որոց իմաստն քաջաբերական էր առ ժողովուրդն ապագայի տեսակէտով և միանգամայն երախտագիտական առ վարժարանաց խնամատարս, արտասանուեցան ուսանաւորներ և տրամախօսութիւնք հայ, ուրման, և գաղղիներէն լիզուներով, ամենքն ալ զանազան երգոց ընդմիջմամբ : Բաշխուեցան պսակներ հանգերձ գրական պարգեւներով, որպէս և սիրուն խաղալիքներ մանուկներու համար :

Ի վերջոյ ոտքի ելնելով վարժարանաց պատկառելի վերատեսուչն պէտք եղած տեղեկութիւնք հաղորդեց ժողովրդեան, Փօքչանի Հայոց կրթական հաստատութեանց վրայ, և ապա շատ աղբուր և շատ գեղեցիկ ատենաբանութիւն մ'ըրաւ. նախ կրկնակի շեշտեց ըսելով թէ « Առանց վարժարանի երկրեցիկ ճակարի » և բացատրեց թէ ինչո՞ւ համար, ի մի բան՝ հայրենասիրական եռանդագին զգացումներով համոզեց զյարգելի հանդիսականս թէ եկեղեցւոյ գոյութեան անմահութիւնն կը կայանայ վարժարանաց կենդանութեան մէջ և կոչոււմ ըրաւ անունն ձեռք ձեռքի տալու՝ ի կատարումն իւրեանց սրբազան պարտաւորութեանց՝ հանդէպ մեր ազգային վարժարանաց հարազատ պահպանութեան : Մեծայարգ ատենաբանի խօսքերն պարբերաբար կը ծավալարուէին երկարօրէն : Հուսկ ուրեմն իւր խօսքերն ուղղելով առ հինգ շրջանաւարտս, յորդորեց և խրատաց զանոնք, որպէս զի ո՛ր որ երթան, ո՛ր որ լինին, շնորհան իրենց ազգային եկեղեցին և վարժարաններն, յորս կրթուելով կենաց պայքարի առաջին ու մանկական քայլերն առին, լինին միշտ ախտասիրութեան և պարկեշտութեան գովելի օրինակներ, որպէս զի կարենան փայլուն ապագայ ունենալ և պատիւ բերել թէ՛ իւրեանց խնամատար ծնողաց և թէ՛ միանգամայն ազգին : Շնորհակալութիւն յայտնեց նմանապէս առ վարժարանաց ուսուցչական մարմինն, իւր հոգատարութեան համար : Հանդէսն վերջացաւ քահանայի սրտաբուխ պահպանիչովն և հանդիսականք ցրուեցան ուրախագին տպուորութեան ներքեւ :

Մ. Կ. ՄԻՐԱԽԱՐԵԱՆ

Ա. Զ. Դ.

Ռումանիոյ Փօքչան քաղաքի Հայոց Ս. եկեղեցւոյն համար պէտք կայ արժանաւոր քահանայի մը և յարմար ձայնաւոր տիրացուի մը : — Փափաքողները թող բարեհաճին զիմելու առ

Ephorie Arménienne
à Focsani
en Roumanie

ՆՈՐ ՕՍԱՅ ԻՍՏ ԸՐՍԱՏՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐԱԿ ԳՐԱԿԱՆ և ԸՆԿԵՐԱԿԱՆ ԻՍՏԱՍԽԱՅ ՀԱՆՁԷՍԻ Բ ԿՈՒՐՍԻ 7ԻՔ ԹԻՒՐԸ (1907 յուլիս 1) յոր բովանդակութիւնն է

Ֆէմինիզմը. Մոզպետ : — Լէոնարտի (Թարգ.) Հ. Ա. Ղազարեան. — Մեծաշատանքը. Ա. Արփիարեան. — Հարատանի կեանքէն. Խմբագրութիւն. — Ամերիկայ կեանքէն. Մ. Պերպլիբեան. — Միջազգային Հայը. — ***. — Արձագանք. Խմբագրութիւն :

«Շիրակ»ի տարեկան բաժնորդագրիկն է 12 Փրանք. Հասցէն

Rédaction de la revue CHIRAG
Boite postale No. 37
LE CAIRE (Egypte)

ՊԱՏԱՆԵԱՆ ԹՈՅՁԵՐ. — Գրեց Մ. Մր. Գասեան, Պոսթըն Աղլանդեան տպարան. 1907 : Երես 152. Գին 25 սենթ (1 Փր 25 սենթ.մ.) :

«Այոս»ի խմբագիր Տիար Մ. Միւսեանի իր պատանեկութեան ժամանակուցած իրանդամ տեսիլներն և խորհուրդներն, յոյգ ընդ յոյսերի տպուորութեան տակ գրածներէն ընտրելագործ մասերն ամփոփուած են այս գրքի մէջ սր ստանալու համար պէտք է զիմել «Այոս»ի խմբագրութեան հասցէին. 38 Atlantic Ave. BOSTON Mass. U. S. A.) :

Մ. Գարագաշեանի 213 Ն. Ռիսիսի Թի. Ստաւրոպոլ-Ռոստով : 1907

Ստաւրոպոլ-Ռոստով : Նոր-Նախիչեւան. Տպարան Ս. Ս. Աւագեանցի : (Թէ ոչ սիրի հայ ժողովրդի նախորդ հովիւ Տ. Ներսէս քահանայ Հերթեցեանի առթով Թէ ոչ սիրի աղաներին և ժողովրդին մէջ ծագած վճերի պատմութիւնն է որոնց հետեւեալքն եղած է Հերթեցեան քահանայի աքտորութիւն կառավարութեան միջոցով Նի՞՛ք պատմուածները ճշդ են — փաստաթուղթեր ալ հրատարակուած են ապացուցանելու համար— այս գործը քստմանի է՞ մը կաւելուծէ կերակրական բռնակալութեան պատմութեանը մէջ)

ՌԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՇԱՐԱՆ

Լօզան, Զուլիցերիա
Երգ տարեշրջան

Կրթարանիս տեսչութիւնը համութեամբ կը յայտարարէ թէ, շնորհիւ իւր գտած աջակցութեանը, յառաջիկայ Երգ տարեշրջանին 5 աշակերտ պիտի ընդունի կէս քուլակով այն է ամսական 75 ֆրանքով, անունը զի, բնակարանի և ուսման համար : — Ընտանեկան կեանք :

Յառաջիկայ շրջանը կոչուի սեպտեմբերի սկիզբին : Ընդունելութիւնները տեղ ունին Արմէն 15 օգոստոս :

Դիմել հետեալ հասցեով
Institut Arménien, Lausanne (Suisse)

Մ. Նալբանդեան
Տօքթ. Գիտ.

ՃԼՈՐԷՆ-ԻՄՔԱԳԻՐ

Մ. ԳՈՐԾԵԱՆԳԱԼԵԱՆ

ԵԱՐՍԵՑԻ

Հայրենի ստորագր. Փարքուպիտե
Le Gérant: François CARRIERE
Marseille. — Imprimerie du Midi